«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ

2022-2026թթ. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԻՑ ԲԽՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԾՐԱԳԻՐ
ՊԼԱՆ–ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ԱՂՅՈՒՍԱԿ
(2023, 2024ԹԹ.)

Խնդիրները	Հիմնական գործողությունները	Իրականացման ժամկետները	Առկա վիճակը	Պլանավորվածի համեմատություն
1	2	3	4	5
ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ 1. Կրթության որակի ապահովում և բարելավում				
<u>Խնդիր 1.1.</u> Բարելավել և արդիականացնել կրթական ծրագրերի որակը	1.1.1.1.ՄԿԾ–պատասխանատուների ինստիտուտի ներդրում 1.1.1.2. ՄԿԾ–ի մշակման, մշտադիտարկման գործընթացում արտաքին շահակիցների ներգրավվածության ընդլայնում:	2023թ.	Ներդրված է կրթական ծրագրերի պատասխանատուների ինստիտուտը: 2022-2023 ուստարում, կիրառելով ՈԱԲ քաղաքականությունը, ամբիոնների հետ համագործակցությամբ վերանայվել են Որակի պատասխանատուները, որոնց գործառույթները նախապես հստակեցված են եղել ՈԱԲ–ի կողմից: Որակի ամբիոնային պատասխանատուների հետ անցկացվել են տեղեկատվական և խորհրդատվական հանդիպումներ ու քննարկումներ, որոնք միտված են եղել լավագույն փորձի վերհանմանն ու ամբիոններում որակի աջակիցների միջոցով դրանց տարածմանը: ՄԿԾ–ների մշակման, մշտադիտարկման աշխատանքներում համաձայն ռեկտորի հրամանների ընդգրկվում են ոլորտից արտաքին շահակիցներ: 2023-2024թթ–ին իրականացվել է 4 կրթական ծրագրի մշտադիտարկում:	Նախատեսված կրթական ծրագրերի բարելավումը մշտադիտարկման արդյունքների հիման վրա իրականացվում է հաջորդ՝ 2024-2025 ուստարում:

	1.1.1.3.Կրթական ծրագ-ների բովանդակության ճկունության և գործառ-նության մեխանիզմների ներդրում, շարժունության պատուհանի ստեղծում	2023-2026թթ.	Օտարալեզու կրթական ծրագրերից՝ «Առողջարարական ֆիզիկական կուլտուրա՝ կինեզիոլոգիա» բակալավրի ծրագիրը հաստատված է (կարիք ունի վերանայման), «Ադապտիվ սպորտ» մագիստրոսական ծրագիրը պատրաստ է, սակայն դեռ հաստատված չէ: https://drive.google.com/file/d/1f1QcDTt_hc6NZ72Kbfxuz8Q_TbXIfmkI/view?usp=drive_link N 92-Լ հրամանով ստեղծվել են հիմնադրամում բակալավրի և մագիստրոսական օտարալեզու կրթական ծրագրերի մշակման նպատակով աշխատանքային խմբեր, և ժամկետ է սահմանվել 2023թ-ի դեկտեմբերի 7-ից 2024թ.-ի մարտի 1-ը. ՄՀԶԾ բաժինը սահմանված ժամկետներում ներկայացրել է ՄԿԾ փաթեթ միջազգային բուհերի համապատասխան ծրագրերի՝ https://drive.google.com/drive/folders/1p7kL3nrH3jgGSpcS-JzOF6sftujzBTdS?usp=drive_link	ՀՀ ՈԱԾ-ի և ՈԵԾ-ի բնութագրիչներին բուհի կրթական ծրագրերի համապատասխությունն ապահովելու ուղղությամբ վերանայումները իրականացվում են պարբերաբար:
	1.1.2.Արդի կրթական ծրագրերի ներդրում,	2024-2026 թթ.	Արդի մասնագիտական պահանջներին բուհի կրթական ծրագրերի համապատասխանությունը ուսումնասիրելու համար իրականացվել են հարցումներ և ֆոկուս խմբային քննարկումներ ինչպես ներքին, այնպես էլ արտաքին շահակիցների հետ:	Շրջանավարտների զբաղվածության 30% ցուցանիշն ապահովելու ուղղությամբ աշխատանքները կրում են շարունակական բնույթ:
	1.1.3.Ուսուցման, դասա-վանդման և գնահատ-ման ժամանակակից տեխնոլոգիաների ներդրում	2022-2023 2024 2025.	Ինտերակտիվ դասավանդման և ուսումնառության մեթոդների ներդրման ուղղությամբ պարբերաբար իրականացվել են քննարկումներ ամբիոններում: Գնահատման ռուբրիկային մեխանիզմի մշակման համար 2024թ–ին իրականացվել են հանդիպումներ բոլոր ամբիոնների հետ՝ նախնական տարբերակի քննարկման համար: Աշխատանքները դեռ ավարտված չեն տարբեր ամբիոնների կողմից առաջարկների երբեմն իրարից խիստ տարբերվող մոտեցումներով պայմանավորված:	Կրթական ծրագրերի լրամշակումը ժամանակակից ուսուցման դասավանդման և գնահատման տեխնոլոգիաներով նախատեսվում է 2025թ–ին:

<u>Խնդիր 1.2.</u> Ապահովել հետազոտակենտրոն և պրակտիկակենտրոն ուսուցում	1.2.1.Հետազոտական բաղադրիչի ներդրում կրթական ծրագրերում, կրթության և գիտության կապի ապահովում:	2023-2026 թթ.	Իրականացվել են աշխատանքներ ուսանողների շրջանում գիտական գործընթացներին մասնակցության ապահովման ուղղությամբ: ՄԿԾ–ներում հետազոտական բաղադրիչի ներդնումը իրականացվում է ուսանողներին հանձնարարվող ինքնուրույն աշխատանքների միջոցով: Տպագրվել է ուսանողական գիտական տարեգիրք, որը ներառում է ուսանողների կողմից հրատարակված հոդվածներ: Կազմակերպվել է «Սպորտ, առողջություն, կրթություն» ուսանողական գիտաժողով:	ՄԿԾ–ներում հետազոտական բաղադրիչի բարելավումը կրում է շարունակական բնույթ:
	1.2.2.Պրակտիկայի բովանդակային և քանակական բնութագրերի համապատասխանեցում աշխատաշուկայի պահանջներին, պրակտիկաների կազմակերպման, վերահսկման ընթացակարգերի կատարելագործում	2023-2026 թթ.	Վերանայվել է պրակտիկայի անցկացման ներբուհական կանոնակարգը, լրամշակումները քննարկվել են ամբիոնների հետ, որոնց հիման վրա կանոնակարգվել է պրակտիկայի պաշտպանության ընթացակարգը, վերանայվել են պրակտիկայի հանձնարարականների բովանդակային պահանջներն ու գնահատման չափանիշները: ՈԱԲ–ի կողմից իրականացվել է պրակտիկայի արդյունավետության գնահատում քանակական հարցումների և ֆոկուս խմբային քննարկումների միջոցով:	Դեռևս վերամշակման կարիք ունեն բակալավրի և մագիստրատուրայի պրակտիկայի ծրագրերը:
<u>Խնդիր 1.3</u>. Արդիականացնել ՀՖԿՍՊԻ–ի ուսումնական գործընթացի կառավարման համակարգը	1.3.1.Ուսումնական գործընթացի կառավարման ընթացակարգի մշակում և կիրարկում	2023-2025 թթ.	Բուհում գործող «Կրեդիտային համակարգ» ծրագրի շարունակական թվայնացման շրջանակներում ավելացվել են ֆունկցիաներ ուսումնական գործընթացի կառավարման արդյունավետության բարձրացման նպատակով, այդ թվում՝ դասաբաշխման, գնահատման, կրեդիտային պարտքի հաշվարկման, ընտրովի առարկաների բաշխման, վերահանձնման տեղեկագրերի տրամադրման և այլն:	Ուսումնական գործընթացի թվանացված ծրագրի կատարելագործումը կրում է շարունակական բնույթ:

	1.3.3.Ուսուցման էլեկտրոնային համակարգի ներդրում	2023-2026 թթ.	Առկա է ուսուցման էլեկտրոնային “Google Classroom” համակարգ: ՊԴ կազմի 70%–ի կողմից ուսումնական նյութերը վերբեռնվել են Google Classroom հարթակում և պարբերաբար համալրվում են անհրաժեշտ բովանդակությամբ: Համակարգից պարբերաբար օգտվողների ցուցանիշները 2023թ–ին աճել են՝ կազմելով ՊԴ կազմ – 60%, ուսանողներ – 20%: Նախորդ տարում ցուցանիշները համապատասխանաբար՝ 41% և 15% էին:	Ուսուցման էլեկտրոնային համակարգի ամբողջական ներդրման ուղղությամբ աշխատանքները կրում են շարունակական բնույթ:
<u>Խնդիր 1.5.</u> Ապահովել 5-րդ մակարդակի մասնագիտական կրթություն, հիմնել միջին մասնագիտական ուսումնական հաստատություն, ՄՄՈՒՀ:	1.5.1.Շուկայի ուսումնասիրություն, մասնագիտությունների ընտրություն	2022-2024 թթ.	Իրականացվել է 2022թ–ին:	Իրականացվել է ըստ պլանավորվածի:
	1.5.2.Իրազեկման աշխատանքների իրականացում, այցելություններ հիմնական դպրոցներ	2022-2024 թթ.	ՄՄՈՒՀ-ի գործունեության մասին իրազեկվածությունն ապահովվում է տեղեկատվական բուկլետների, շրջայցերի ընթացքում տարածված տեղեկատվության, ինչպես նաև ՀՖԿՍՊԻ–ի պաշտոնական կայքի «Քոլեջ» բաժնում և ֆեյսբուքյան էջում առկա տեղեկությունների միջոցով:	«ՄՄՈՒՀ-ի գործունեության մասին իրազեկվածության ապահովում, դիմորդների քանակի ավելացում» պլանավորված ուղղություններով ունենք հետևյալ պատկերը. 2022-2023 ուստարում քոլեջն ունեցել է 145 դիմորդ, որից ընդունվել է 90–ը: 2023-2024 ուստարում քոլեջի 160 դիմորդից ընդունվել է 105–ը: Դիմորդների թիվն աճել է 10,3 տոկոսով Ընդունվածների թիվն ավելացել է 16,7 տոկոսով:
ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ 2. Գիտահետազոտական գործունեության արդիականացում և զարգացում				
<u>Խնդիր 2.1.</u> Մշակել և ներդնել գիտահետազոտական գործունեությունը խթանող մեխանիզմներ	2.1.2. Գիտահետազոտական աշխատանքների իրականացման համար լաբորատորիաների ստեղծում և համալրում՝ 1 – սպորտի հոգեֆիզիոլոգիայի, 2- Սպորտ – ԿԱԲ Գ/հ լաբորատորիայի համալրում	2022-2023թթ. 2023-2024թթ.	Սպորտ ԿԱԲ գիտահետազոտական կենտրոնը համալրվել է սարքավորումներով, որոնք կիրառվում են հոգեֆիզիոլոգիական գնահատման նպատակով (Պոլիգրաֆային գրանցմամբ աշխատող Ռեակոր համակարգը, ուղեղագրի գրանցմամբ աշխատող Իմոտիվ սարքը և հուզական վիճակի գնահատման Բիովել սարքը):	Նախատեսված էր հիմնել առնվազն 2 առանձին գիտահետազոտական լաբորատորիա, որոնցից մեկը հոգեֆիզիոլոգիական իսկ մյուսը ֆունկցիոնալ գնահատման հնարավորություններով: Այս գործընթացը դեռևս չի ավարտվել, պայմանավորված ոչ բավարար տեխնիկական ռեսուրսներով:

	2.1.3. Գիտական գործունեության խրախուսման մեխանիզմների կատարելագործում	2022-2026թթ.	Պլանավորվում է ընդլայնել հետազոտական աշխատանքով զբաղվելու խրախուսման համակարգը: Երտասարդ հետազոտողների օժանդակում արտաքին և ներքին դրամաշնորհների դիմելու գործընթացում:	Երիտասարդ կադրերի կրթում, Գիտական գործունեության զարգացում: Երիտասարդ հետազոտողները արժանացել են երկու տարբեր հետազոտական դրամաշնորհների: Սպորտ ԿԱԲ-ի հետազոտական խումբը իրականացրել է երեք արտաքին դրամաշնորհային ծրագրեր:
<u>Խնդիր 2.2.</u> Նպաստել ուսանողների գիտական և նորարարական ակտիվության ու ստեղծագործական նախաձեռնություն ների զարգացմանը	2.2.1.Ուսանողական գիտական գործունեության խրախուսման ընթացակարգի մշակում	2022-2023թթ.	Անց են կացվել աշխատաժողովներ հետազոտական մեթոդաբանության և փորձի փոխանակման նպատակով: Ընդլայնվել են գիտահետազոտական գործունեության մենթորական աշխատանքները: Ուսանողական կոնֆերանսներին ներկայացված աշխատանքները ներառվել են «Սպորտ, առողջություն, կրթություն» տարեգրքում: Բոլոր կրթական ծրագրերում որպես ավարտական բաղադրիչ ներառված է հետազոտական բաղադրիչը: 2022-2023 ուստարում «Սպորտ, առողջություն, կրթություն» տարեգրքում տպագրվել 19 հոդված, գիտաժողովին զեկուցվել է 7–ը: 2023-2024 ուստարում տարեգրքում հրատարակվել է 9 հոդված, զեկուցվել 9–ը:	Պլանավորվածի համաձայն առկա են մասնագիտական խմբեր: Ուսանողական հետազոտական աշխատանքներում մենթորային փոխհարաբերությունների ամրապնդում՝ կենտրոնացված վերահսկման մեխանիզմով: Ուսանողների գիտական գործունեության ցուցանիշները նվազել են:

<u>Խնդիր 2.3.</u> **Սահմանել ՀՖԿՍՊԻ–ի գիտահետազոտական գործունեության գերակա ուղղությունները, նպատակները և դրանց հասնելու ճանապարհային քարտեզը**	2.3.1 Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտում շուկայի պահանջների, արդի հետազոտությունների ուղղությունների ուսումնասիրում	2022-2026թթ.	Հետազոտական աշխատանքները որոշակիացվել են: Բուհում գործում են հետևյալ ուղղությունները. 1. «Օլիմպիական սպորտ. օլիմպիզմը, օլիմպիական կրթությունը և ժառանգականությունը ժամանակակից սպորտում», 2. «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մանկավարժական հիմնախնդիրները», 3. «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի հոգեբանական հիմնախնդիրները», 4. «Սպորտային գործունեության և առողջ ապրելակերպի բժշկակենսաբանական հայեցակետերը», 5. «Ֆիզիկական վերականգնման հիմնախնդիրները սպորտում», 6. «Ադապտիվ ֆիզիկական կուլտուրան և ադապտիվ սպորտը ժամանակակից աշխարհում», 7. «Սպորտային տուրիզմի զարգացման հեռանկարները», 8. «Սպորտի կառավարման նորարական տեխնոլոգիաները»:	Սպորտի և ֆիզիկական դաստիարակության ոլորտում հետազոտությունների արդիականացում: Տարբեր արտաքին շահակիցների հետ կազմակերպված քննարկումներ (հիմնադրամներ, գիտության կոմիտե) սպորտի և ֆիզիկական դաստիարակության ոլորտում կիրառական ելքով նախագծերի իրականացման նպատակով:
<u>Խնդիր 2.4.</u> **Նպաստել ՀՖԿՍՊԻ–ի գիտական հետազոտությունների արդյունքների կիրառելիության բարձրացմանը և առևտրայնացմանը**	2.4.1.Գիտահետազոտական ուսումնասիրությունների արդյունքների ներդրում ուսումնական գործընթաց և դրանց առևտրայնացում	2023-2026թթ.	Բոլոր հետազոտական խմբերի կողմից ձեռքբերված արդյունքները ներդրվել են համապատասխան դասընթացներում: Դասընթացները առավել արդիական դարձնելու նպատակով դրանցում ներառվում են միջազգային հետազոտական նորույթները:	Այս մոտեցումը շարունակաբար ապահովում է գիտահետազոտական գործունեության կիրառականության բարձրացումը:
<u>Խնդիր 2.5.</u> **Ստեղծել ոլորտային գերազանցության լաբորատորիաներ՝ SPIN–off–երի ստեղծման ակնկալիքով**	2.5.1.Սպորտի ոլորտի սպասարկման համար լաբորատորիաների հիմնում՝ մանկավարժական, հոգեբանական, կենսաբանական ուղղություններով	2024-2026թթ.	Սպորտ ԿԱԲ գիտահետազոտական կենտրունում իրականացվել է տարբեր ակումբների և ֆեդերացիաների մարզիկների ֆունկցիոնալ գնահատում: Այդ աշխատանքների մեջ կիրառվել է նաև հոգեֆիզիոլոգիական գնահատում՝ վերջին երկու տարում ձեռք բերված սարքավորումների միջոցով:	Գիտական հետազոտությունների համար անհրաժեշտ նյութատեխնիկական բազայի համալրում, հետազոտությունների համար հնարավորությունների ընդլայնում: Նախատեսվում է շարունակել սարքավորումների ձեռքբերումը, ինչը կընդլայնի մարզիկների ֆունկցիոնալ գնահատման հնարավորությունները:

<u>Խնդիր 2.6.</u> Ապահովել գիտահետազոտական մտքի միջազգայնացում և համատեղ ծրագրերի մշակում	2.6.1.Միջազգային համատեղ դրամաշնորհային ծրագրերի իրականացում	2023-2026թթ.	Սպորտ ԿԱԲ գիտահետազոտական կենտրոնը Շվեյցարական գործընկերների հետ դիմել է Եվրամիության կողմից իրականացվող JTC 2025 ծրագրին՝ ներկայացնելով «Better care closer to home: Enhancing primary and community care» ծրագիրը: Ստեղծված գործընկերային կապերի միջոցով նախատեսվում է հիմնել այլ կոնսորցիումներ նոր միջազգային դրամաշնորհների դիմելու նպատակով:	Գիտական մտքի միջազգայնացում, միջազգային կապերի ընդլայնում:
ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ 3. Կառավարման արդյունավետության բարձրացում, մարդկային կապիտալի իրացում				
<u>Խնդիր 3.1.</u> Կատարելագործել կառավարման մասնակցային մոդելը	3.1.3.Բոլոր հաստիքների պաշտոնների անձնագրերի (աշխատանքի նկարագիր) մշակում՝ հստակ գործառույթների սահմանմամբ	2022-2023թթ.	Կառավարման մասնակցային մոդելի կատարելագործման նպատակով ՀՖԿՍՊԻ մարդկային ռեսուրսների կառավարման բաժինը վերամշակել է մարդկային ռեսուրսների կառավարման քաղաքականությունը, հաստատվել է 2023թ. փետրվարի 28–ին: Այս փաստաթղթով որոշակիացվել է մարդկային ռեսուրսների պլանավորման (համալրման) գործընթացը, ներդրվել է աշխատակիցների ընդունման մրցութային կարգը: https://sportedu.am/wp-content/uploads/2023/03/%D5%84%D5%8C%D4%BF-%D5%94%D4%B1%D5%82%D4%B1%D5%94%D4%B1%D4%BF%D4%B1%D5%86%D5%88%D5%92%D4%B9%D5%85%D5%88%D5%92%D5%86.pdf 2024թ. ինստիտուտի ԳԽ կազմը համալրվել է բացառապես ընտրության միջոցով: 2022 թ.–ից ՀՖԿՍՊԻ–ում ներդրվել են պաշտոնի անձնագրեր ՊԴ կազմի համար, մասնավորապես «Ամբիոնի վարիչ»–ի, «Պրոֆեսոր»–ի, «Դոցենտ»–ի, «Դասախոս»–ի, «Ասիստենտի» պաշտոնների համար: Գործողության ամբողջական իրականացումը վերապլանավորվել էր 2023–2024 ուսումնական տարում: Այն հաստիքներում, որտեղ պաշտոնի անձնագրեր դեռ առկա չեն, աշխատանքի նկարագիրը սահմանվում է կնքվող աշխատանքային պայմանագրով:	Մինչ այդ նշանակովի անդամների քանակը գերակշռել է: Պաշտոնի անձնագրերի համար նախատեսված ժամկետը չի պահպանվել:

	3.1.4.ՀՖԿՍՊԻ–ի ղեկավար, պրոֆեսորադասախոսական, ուսումնաօժանդակ և սպասարկող անձնակազմերի աշխատողների աշխատանքային գործունեության գնահատման կառուցակարգերի ներդնում	2022-2026թթ.	Ներկայումս իրականացվում է ընթացիկ և ամփոփիչ հաշվետվությունների հիման վրա:	Վարկանշավորման աղյուսակի ներդնումը հետաձգվել է:
	3.1.5. 2022-2026թթ. Ռազմավարական ծրագրի և գործողությունների պլան–ժամանակացույցի արդյունքների պարբերական գնահատում, մշտադիտարկման հանձնախմբի ստեղծում	2022-2026թթ.	Համաձայն «ՀՖԿՍՊԻ-ի Ռազմավարական ծրագրի մշակման, մշտադիտարկման, գնահատման և վերանայման քաղաքականություն և ընթացակարգ»–ի՝ ՌԾ հերթական մշտադիտարկումն իրականացվում է երկու տարին մեկ անգամ պարբերականությամբ: 2022թ.–ին կատարվել է բուհի 2022–2026թթ. ՌԾ կատարողականի միջանկյալ մշտադիտարկումը: Հերթական՝ 2023-2024թթ. ՌԾ մշտադիտարկման գործընթացը սկսվել է 2025թ.–ի ապրիլի 4–ից:	2022 թ–ին կազմվել է կատարողականի միջանկյալ վերլուծության զեկույց:
<u>Խնդիր 3.2.</u> Ապահովել մրցունակ և առողջ աշխատանքային միջավայր՝ կարողունակ մասնագետներով, բացահայտել և զարգացնել անձնակազմի մասնագիտական ներուժը	3.2.1. Անձնակազմի մասնագիտական և ընդհանրական հմտությունների զարգացման համալիր ծրագրի մշակում:	2022-2026 թթ.	Ապահովվել է աշխատակիցների մասնակցությունը այլ կազմակերպությունների կողմից կազմակերպված վերապատրաստումներին՝ «Մալբրի 2» համակարգի կիրառման և քննական թեստերի մշակման թեմայով:	Այլ տեղեկությունները բացակայում են:
	3.2.2.Աշխատակիցների առողջության ապահովագրության ծրագրի իրականացում	2024թ.	Ընթանում են քննարկումներ աշխատակիցների առողջության ապահովագրության գործընթացում Ինստիտուտի մասնակցային հնարավորությունների չափը որոշելու վերաբերյալ, խնդրո առարկայի լուծման անհրաժեշտությունը ամրագրվել է նաև 2025թ. հունվարի 17-ից՝ Ինստիտուտի նոր ռեկտորի ներկայացրած Զարգացման ծրագրում:	Նախատեսված ժամկետը չի պահպանվել, սակայն աշխատանքներ տարվում են այդ ուղղությամբ:
<u>Խնդիր 3.3</u> Սեփական կադրային դպրոցի կառուցակարգերի ստեղծում	3.3.1.Կադրային բազայի ստեղծում	2022-2026թթ.	Կադրային բազա դեռևս առկա չէ:	Տեղեկությունները բացակայում են:

	3.3.2.Անձնակազմի նպատակային հավաքագրում, ընտրության կազմակերպում, մասնագիտական աջակցման ծրագրերի իրականացում, աշխատողների ծառայողական առաջխաղացման պլանավորում	2022-2026թ.թ.	Ինստիտուտի ԳԽ 25.05.2022թ. թիվ 119-Լ որոշմամբ հաստատված «Պրոֆեսորադասախոսական, գիտական և վարչական անձնակազմի թափուր պաշտոնների համալրման ընթացակարգ»–ի համաձայն դրանք համալրվում են մրցութային կարգով:	Իրականացվել է նախատեսված ժամկետում:
ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ 4. Ֆինանսների կառավարման արդյունավետության բարձրացում				
<u>Խնդիր 4.1</u> Ապահովել ՀՖԿՍՊԻ–ի ֆինանսական մուտքերի բազմազանեցում, ֆինանսական միջոցների անհրաժեշտ ներհոսք	4.1.1 Արտաբյուջետային միջոցների, աղբյուրների և ծավալի ընդլայնում, ֆինանսական միջոցների ներհոսքի ապահովում և դրանց աղբյուրների բազմազանեցում ֆինանսական ռիսկերի կառավարման մեխանիզմների/կառուցակարգերի ներդնում	2022-2026թթ.	Արտաբյուջետային միջոցների ֆինանսկան ներհոսք դրամաշնորհների միջոցով Ընդհանուր գումարը կազնում է 17.6 միլիոն ՀՀ դրամ Դրամաշնորհ դոլարային հաշվով 3.764 միլիոն ՀՀ դրամ և 9834 եվրո:	Մինչև 2025 թվականի դեկտեմբերի 20-ը մեր կողմից կներկայացվի ֆինանսների արդյունավետ կառավարման մշակված ընթացակարգ
<u>Խնդիր 4.2</u> Զարգացնել ֆինանսական պլանավորման համակարգը, կատարել ֆինանսների նպատակային բաշխում, բարձրացնել ֆինանսական և նյութական ռեսուրսների կառավարման արդյունավետությունը	4.2.1.ՀՖԿՍՊԻ–ի գործունեության ֆինանսական պլանավորման գործընթացի կատարելագործում, ֆինանսական ռեսուրսների արդյունավետ և նպատակաուղղված բաշխում՝ ըստ ռազմավարական գերակայությունների	2022-2026թթ.	ՀՖԿՍՊԻ–ի գործունեության ֆինանսական պլանավորման գործընթացի կատարելագործման արդյունավետության բարձրացման համար կատարվում են շարունակական աշխատանքներ	Աշխատանքներն ուղղված են պլանավորման համաձայն՝ արդյունավետ և կառավարելի բյուջե ունենալուն
	4.2.2. Ենթակառուցվածքների և նյութական ռեսուրսների օգտագործման արդյունավետության բարձրացում	2022-2026թթ.	2024 թվականին վերանորոգվել է վոլեյբոլի մարզադահլիճը, 2025 թվականին պլանավորված է վերանորոգել մարզախաղերի մարզադահլիճը, մարմնամարզության մարզադահլիճը և ըմբշամարտի մարզադահլիճը: Տրվել է վարձակալության մեկ մարզադահլիճ, որի եկամուտը կազմել է 9.900.000 ՀՀ դրամ	Արտաբյուջետային մուտքերի աճի տոկոսը 2022 թ. նկատմամբ՝ առնվազն 5 % չի ապահովվել:

<u>Խնդիր4.3</u> **Բարելավել և արդիականացնել ՀՖԿՍՊԻ–ի շենքային պայմանները, բարձրացնել կիրառման արդյունավետությունը**	4.3.1 Դահլիճների վերա-նորոգում Ձյուդո և կառատե Մարզախաղեր	2022-2023թթ. 2024-2025թթ.	Վերանորոգվել է Ձյուդոյի և կառատեի մարզադահլիճը՝ դրամաշնորհ 44.666.000 ՀՀ դրամ: Վերանորոգվել է մարզախաղերի մարզադահլիճը՝ 3.898.560 ՀՀ դրամ:	Պետք է վերանորոգվեր առնվազն 2 մարզադահլիճ, սակայն վերանորոգվել է մեկ մարզադահլիճ և փոխվել են մեկ մարզադահլիճի պատուհանները:
	4.3.2.Գրադարանի ենթա-կառուցվածքի զարգացում Գրադարանային ֆոնդի համալրում և թվայնացում, արդի պայմանների ապահովում Կահավորում Մասնագիտական գրականության ձեռքբերում	2022-2023թթ. 2022-2026թթ .	Գրադարանի արդի պայմանների ապահովում և կահավորում կատարվել է 2022 թ.: Պլանավորված է եղել 2.000.000 ՀՀ դրամ: Ձեռք է բերվել 900 հատ գիրք 1.639.986 ՀՀ դրամ կատարվել է պլանավորվածի 82 տոկոսը:	Ըստ գրադարանի պատասխանատուի հաշվետվության՝ 2024 թվականին 2023 թվականի համեմատ ընթերցողների թիվն աճել է 67 ուսանողով, հաճախումների թիվը՝ 897 ուսանող, գրքային ֆոնդի քանակն ավելացել է 170-ով:
	4.3.3.Ուսումնական գործ-ընթացի նյութատեխնիկա-կան բազայի համալրում Համակարգչային տեխնիկա և սարքավորումներ	2022-2026թթ. 2022-2026թթ.	Ձեռք է բերվել կենսաբանական հետադարձ կապով աշխատող հոգեբանական ռեաբիլիտացիայի համալիր և էլեկտրաուղեղագրման անլար գրանցման համակարգ էլեկտրոֆոտոնային պատկերմամբ խցիկ 18.996.000 ՀՀ դրամ: Համակարգչային տեխնիկայի ձեռք բերում՝ 5.106.762 ՀՀ դրամ	Պլանավորվել է ստեղծել Մեդիալաբորատորիա- 1, Կինեզիոլաբ ուսումնաառողջարարական լաբո ռատորիա –1, սպորտային տուրիզմի լաբորատորիա -1 Ինտերակտիվ լսարան – 1 Գործում է միայն մեդիալաբորատորիա սպորտի կառավարման և մարզական լրագրության ամբիոնին կից:
	4.3.4 Լսարանների, միջանցքների և սանհանգույցների ընթացիկ նորոգման ու ներքին հարդարման, վերանորոգման Աշխատանքների իրականացում	2022-2023թթ.	Տանիքի վերանորոգման աշխատանքներ 7.988.052 ՀՀ դրամ: Գլխավոր մասնաշենքի վերանորոգման աշխատանքներ՝ 17.000.000: Մարզադահլիճի վերանորոգում՝ 3.898.560: Վերանորգվել է վոլեյբոլի մարզադահլիճը, կից սանհանգույցները, ինչպես նաև նկուղային տարածքը վերածվել է հրաձգարանի և կից լսարանի: Շենք շինություններ վերանորոգում՝ 31.684.132 ՀՀ դրամ:	Պլանավորվել է վերանորոգել թվով 5 լսարան և 8 սանհանգույց: Իրականում կան վերանորոգված լսարաններ և սանհանգույցներ, սակայն 23-24 թվականներում շին. աշխատանքներին վերաբերվող կատարողականներում կոնկրետ 5 լսարանի և 8 սանհանգույցի վերանորոգման մասին տեղեկություն չկա: Բակային տարածքները չեն բարեկարգվել:

	4.3.5.Կենսագործունեության անվտանգության պահանջների իրականացում: Մասնաշենքերի հսկողության ենթակառուցվածքի զարգացում: Էլեկտրոնային անցակետի գործարկում	2022-2026թթ.	Հակահրդեհային համակարգ՝ 3.990.000 ՀՀ դրամ:	Անվտանգության համակարգի գործարկում և գործունեության ապահովում կատարվել է մասնակի՝ չի վերանորոգվել վերելակը:
ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ 5. Արտաքին կապեր և միջազգայնացում				
<u>Խնդիր 5.1</u> Ընդլայնել և բազմազանեցնել ՀՖԿՍՊԻ-ի միջազգայնացմանը ուղղված համալիր գործընթացները՝ ապահովելու բուհի շարունակական ակտիվ մասնակցությունը միջազգային ինտեգրման գործընթացներին:	5.1.2.ՀՖԿՍՊԻ-ի համագործակցության շրջանակների ընդլայնում արտասահմանյան բուհերի և միջազգային կառույցների հետ	2022-2026 թթ.	Կնքվել են պայմանագրեր՝ [Ղազախստանի Աբայ Միրզախմետով Կոկշետաուի համալսարանի հետ] Ռուսաստանի Միջազգային Օլիմպիական համալսարանի (ք. Սոչի) հետ РАНХиГС Մոսկվայի համալսարանի հետ եղել են բանակցություններ, սակայն պայմանագրի կնքումը հետաձգվել է պատերազմով պայմանավորված https://tinyurl.com/4adwzxf3 Ստեղծվել է հնարավորություն Լեհաստանի Ջոզեֆ Պիլսուդսկու ֆիզիկական դաստիարակության համալսարանում մասնագիտական գործունեության հետազոտական վերապատրաստում անցնելու	Կնքվել են 2 պայմանագրեր, ինչպես պլանավորված էր՝ գործուն, քանի որ 2 պայմանագրերի շրջանակներում էլ պլանավորված են գործողություններ՝ իրականացնելու վերապատրաստումներ, մասնակցելու ամառային դպրոցներին և այլն.

	5.1.3. Միջազգային գիտա-ժողովներին, սեմինարնե-րին, վերապատրաստման դասընթացներին ՀՖԿՍՊԻ–ի աշխատա-կազմի մասնակցության խթանում	2022-2026 թթ.	Միջազգայնացման գործընթացին ամբիոններին մասնակից դարձնելու նպատակով N 46-Ա հրամանով ամբիոններում նշանակվել են մջազգային ծրագրերի պատասխանատուներ, սակայն դրական աճ դեռևս չի գրանցվում Ընդհանուր թվով 92 հրավեր է եղել սեմինարների, գիտաժողովների մասնակցության, սակայն ունենք 5 մասնակցություն Մասնակցություն է եղել Համալսարանական գավաթ-2023 շախմատի խաղին՝ 3 մասնակից FIEPS-ի հետ անդամակցության շրջանակներում մասնակցություն է եղել Ֆիզիկական դաստիարակության և սպորտի միջազգային ֆեդերացիայի (FIEPS) 18-րդ եվրոպական կոնգրեսին (4 հոգի) https://www.facebook.com/share/p/15sdKrtJDu/ «Էրիկսոնյան հիպնոսը սպորտային մարզիչների, հոգեբանների և օժանդակ խմբերի մասնագետների աշխատանքում» սեմինարի մասնակցություն 3 մասնակից	Չնայած նշված գործողություններին, դեռ չեն գրանցվում պլանավորված արդյունքները. 2022-23թթ. համեմատությամբ միջազգա-յին սեմինարներին մասնակցությունը նույնիսկ նվազել է: Բայց վերապատրաստումներին, անդամակցության շրջանակներում կոնֆերանսներին մասնակցությունը աճել է, սակայն դեռևս չի գրանցվել նախատեսված արդյունքը
	5.1.4. Միջազգային գիտաժողովներ, սեմինարների, կլոր–սեղան քննարկումների կազմակերպում	2022-2026 թթ.	Պլեխանովի անվան ռուսական տնտեսագիտական համալսարանի օտար լեզուների ամբիոնի դասախոսները անգլերեն լեզվով մի շարք դասախոսություններ են կարդացել. ՀՖԿՍՊԻ–ում կազմակերպվել է սեմինար՝ Լիոնի «Էդուարտ Հերիոտ» համալսարանի հիվանդանոցի և Կլոդ Բեռնարի անվան համալսարանի մասնագետների մասնակցությամբ (Ֆիզիկական վերականգնման ամբիոն), իսկ սեմինարին հետևել է քննարկում՝ Առողջարարական ֆիզիկական կուլտուրա՝ կինեզիոլոգիա ծրագրի միջազգայնացման հնարավորությունների վերաբերյալ, ձեռք են բերվել պայմանավորվածություններ և այժմ ընթացքի մեջ է: https://sportedu.am/archives/14716	Միջազգային գիտաժողովներ չեն կազմակերպվել (բյուջե չտրամադրելու պատճառով) Միջազգային կրթական տարածքի ինտեգրման ուղղությամբ իրականացվել են որոշակի գործողություններ

5.2.Խնդիր Նպաստել ՀՖԿՍՊԻ–ի պրոֆեսորադասախոսական անձնակազմի, հետազոտական խմբերի ակտիվ ներգրավմանը կրթական գործընթացներում միջազգային գիտահետազոտական նախագծերում ու դրամաշնորհային ծրագրերում	5.2.1.Միջազգային դրամաշնորհատու կազմակերպությունների հետ համագործակցության հնարավորությունների ուսումնասիրում, ծրագրերի մշակում և հայտագրում	2022-2026 թթ.	Միջազգային գործընկերոջ ներգրավում է կազմակերպվել «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի դասավանդման արդյունավետության բարձրացման ուղիները ՀՀ հանրակրթական դպրոցներում ծրագրի համար (Հեղ. Հասմիկ Ավագյան)	«ՀՖԿՍՊԻ–ի ճանաչելիության բարձրացում, ֆինանսական հոսքերի բազմազանեցում, միջզագային համագործակցության ընդլայնում» պլանավորմանը հասնելու համար դեռ աշխատանքների ակտիվացման կարիք կա, քանի որ առկա արդյունքները դեռևս եզակի են դեպքեր են:
5.3.Խնդիր ՀՖԿՍՊԻ–ի պրոֆեսորադասախոսական, վարչական անձնակազմի, ուսանողության շարժունության ընդլայնում	5.3.1. Ուսանողների շարժունության քաղաքականության բարելավում	2022-2026 թթ.	2 ուսանող միջազգային պրակտիկա են անցել Հնդկաստանի NewsX Հեռուստաընկերությունում, Հայտագրվել ենք 2024թ-ի Էրազմուս+ ակադեմիական շարժունության 2 ծրագրի՝ համակարգողներ Վարշավայի Ջոզեֆ Պիլսուդսկու անվան ֆիզիկական դաստիարակության համալսարան և Բուլղարիայի «Վասիլ Լևսկի» ազգային սպորտային ակադեմիան	2 ուսանող միջազգային շարժունություն Հայտագրում միջազգային ծրագրերին 3 ծրագիր (որից 1–ը գործող (SIN-NEC)) Պլանավորված 5 ուսանողի շարժունությունը նախատեսված է 2022-ից 2026թ-ի համար
	5.3.2. Պրոֆեսորադասախոսական և վարչական կազմերի ներկայացուցիչների շարժունության կազմակերպում	2022-2026 թթ.	SIN-NEC ծրագրի շրջանակներում վարչական կազմի 2 աշխատակից շարժունության այց Իտալիայի Տերամո համալսարան https://tinyurl.com/2h837sah	Պրոֆեսորադասախոսական և վարչական կազմի ներկայացուցիչների շարժունության 20% աճ է նախատեսված 2022-ից 2026թ-ի համար, իսկ 2023-24 թթ. գրանցվել է վարչական կազմից 7 շարժունություն՝ 5 Բելգիայի Թոմաս Մոր համալսարան և 2 Տերամո համալսարան

5.4. Խնդիր **Միջազգային բարձր հղման ցուցանիշ ունեցող ամսագրերում ՀՖԿՍՊԻ-ի պրոֆեսորադասախոսական կազմի հրապարակումների ավելացման նպաստում /աջակցում**	5.4.1.Միջազգային ճանաչում ունեցող գիտական հանդեսներում հրապարակումների աջակցում	2020-2-2026թթ.	Տրամադրվում են վարկանիշային ամսագրերի հղումներ, հարկ եղած դեպքում նամակագրություն է լինում գիտական հոդվածների տեխնիկական ձևավորման, Հայտագրման հետ կապված FIEPS –ը տարբեր հնարավորություններ է ընձեռում անվճար տպագրվելու անդամակցության շրջանակներում՝ տարեկան մեկ անգամ Sustainability journal (Impact factor 3.889) ամսագրում, *Kinesiologia Slovenica* ամսագրում 2023-24 ուստարում Վարկանիշային ամսագրերում տպագրությունները՝ 4 հոդված Scopus, WoS, 8 այլ ամսագրերում:	Հրապարակված հոդվածների թվաքանակի աճ չի գրանցվել, նույնիսկ 2022-23թթ-ի համեմատությամբ նվազել է 4 հոդված Scopus, WoS 8 այլ ամսագրերում
	5.4.2 «Գիտությունը սպորտում» ամենամյա պարբերականում անգլալեզու հոդվածների քանակի ավելացմանը աջակցում	2026 թ.	Ուղարկվում են «Գիտությունը սպորտում» ամենամյա պարբերականի տեղեկատվական նամակները բոլոր միջազգային գործընկեր բուհերին, ընդունվում են հոդվածները նշված ժամանակահատվածում, իսկ անհրաժեշտության դեպքում գիտամեթոդական բաժնում իրականացվում է ամփոփագրերի թարգմանությունը:	2022թ.-ին պարբերականում տպագրվել է 6 անգլալեզու հոդված: 2023թ.-ին 4 հոդված, իսկ 2024թ.-ին՝ 8 հոդված
5.5.Խնդիր **Օտարերկրյա ուսանողների ներհոսքի և աշխարհագրության ընդլայնում:**	5.5.1. Օտարալեզու (անգլերենով) կրթական ծրագրերի մշակում	2022-2026թթ.	N 92-Լ հրամանով ստեղծվել են հիմնադրամում բակալավրի և մագիստրոսական օտարալեզու կրթական ծրագրերի մշակման նպատակով աշխատանքային խմբեր, և ժամկետ է սահմանվել 2023թ-ի դեկտեմբերի 7-ից 2024թ.-ի մարտի 1-ը. ՄՀԶԾ բաժինը սահմանված ժամկետներում ներկայացրել է ՄԿԾ փաթեթ միջազգային բուհերի համապատասխան ծրագրերի՝ https://drive.google.com/drive/folders/1p7kL3nrH3jgGSpcS-JzOF6sftujzBTdS?usp=drive_link Սակայն դեռ արդյունք չկա	Օտարալեզու կրթական ծրագրերի առկայություն (բակալավրի առնվազն 2 օտարալեզու ՄԿԾ և մագիստրոսի առնվազն 1 օտարալեզու ՄԿԾ) պլանավորումը դեռ իրականացված չէ: Տվյալ ժամանակահատվածում ծրագրերի մշակումը ընթացքի մեջ է
	5.5.2.Օտար լեզուներով դասավանդողների խրախուսման մեխանիզմի կատարելագործում	2022-2026թթ.	Խրախուսման մեխանիզմ է հանդիսանում Օտար լեզուներով դասավանդողների տարբերակված աշխատավարձը	Խրախուսման մեխանիզմը առկա է, սակայն անգլերենին տիրապետող դասավանդողների թվի աճ դեռևս չի գրանցվել, ինչը նաև դժվարացնում է իրականացնելու միջազգային շարժունությունը

	5.5.3 Իրազեկման բարձրացմանն ուղղված միջոցառումների իրականացում	2022-2026թթ.	Անդամակցությունների շրջանակներում ԵԱՊՄ-ին տրամադրվել է մանրամասն թարմացված ինֆորմացիա ՀՖԿՍՊԻ-ի վերաբերյալ Բուհի մասին ֆիլմի նկարահանման համար տրամադրվող նյութեր են մշակվել՝ անգլերեն ռուսերեն լեզուներով Ակադեմիական քաղաք նախագծին նյութեր են տտրամադրվել Վարկանիշավորման աղյուսակներ են լրացվում պարբերաբար ՄՀՋԾ բաժինը մասնակցեց EduNetwork-ի կազմակերպած չորրորդ «NetFairwork» կրթական տոնավաճառին, միջոցառման ժամանակ ներկայացնելով ՀՖԿՍՊԻ-ի կրթական ծրագրերը և հնարավոր կրթաթոշակները:	ՀՖԿՍՊԻ–ի կայքի եռալեզու տարբերակը դինամիկ է, և նյութերի օտարալեզու (ռուսերեն և անգլերեն) տարբերակները տրամադրվում են ըստ անհրաժեշտության, սոցիարթակներում տեղեկատվությունը տեղադրվում է պարբերաբար Սոցիարթակների առկայություն Facebook Instagram 2023-24 ուստարում 47 դիմորդ Գրանցվել է դիմորդների աճ՝ 30%, ըստ պլանավորված գործողությունների՝ 2022-23 ուստարում 36 դիմորդ է եղել:
ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ 6. Հանրային և ինստիտուցիոնալ կապերի ամրապնդում և ընդլայնում				
<u>Խնդիր 6.1</u> **Ստեղծել երկարաժամկետ համագործակցային կապեր ՀՖԿՍՊԻ–ի արտաքին շահակիցների և հանրային կառույցների հետ**:	6.1.2.Աշխատաշուկայի ուսումնասիրում, մասնագիտությունների ընտրություն	2022-2026թթ.	Իրականացվել է 2022թ–ին քոլեջի ստեղծման ժամանակ միջին մասնագիտական կրթության շրջանակներում: ՈԱԲ–ի կողմից 2023թ–ին իրականացվել է բուհական ծրագրերի աշխատաշուկայի վերլուծություն. իրականացվել են սոց. հարցումներ Հանրակրթական դպրոցների շրջանում (ընդհանուր թվով՝ 481 դպրոց) և մարզադպրոցների շրջանում (ընդհանուր թվով՝ 79 մարզադպրոց, որոնցից 24% –ը Երևանից, 76%–ը մարզերից)	Վերլուծությունների արդյունքներն օգտագործվել են կրթական ծրագրերի գնահատման շրջանակներում: Աշխատաշուկայի կարիքներին համապատասխան նոր մասնագիտություններ չեն ներդրվել:
	6.1.3. Գործատուների և ձեռնարկատերերի հետ պարբերաբար գործնա-կան հանդիպումների կազմակերպում	2022-2026թթ.	Հաշվետու ժամանակահատվածում կնքվել է 3 համաձայնագիր բժշկական քոլեջների հետ:	Ի կատարում կնքված համաձայնագրերի՝ արտոնյալ պայմաններով բուհ է ընդունվել 10 ուսանող, նախորդ տարվա 8 ուսանողի դիմաց:

<u>Խնդիր 6.2.</u> Ապահովել ՀՖԿՍՊԻ–Ի հասարակական պատասխանատվու-թյունը, գործունեության թափանցիկությունը և հաշվետվողականությունը	6.2.1. ՀՖԿՍՊԻ–ի ՓիԱր քաղաքականություն մշակում և կիրարկում	2022-2026 թթ.	ՀՖԿՍՊԻ-ն Հանրային կապերի և կոորպորատիվ սոցիալական պատասխանատվության ոլորտում իր գործունեությունը ծավալում է՝ համաձայն ՓիԱր- ի քաղաքականության, որը հաստատվել է 2023թ.-ի փետրվարի 28-ին:	Գործում է Հասարակայնության հետ կապերի ամրապնդման և հանրային իրազեկման քաղաքականությունը:
	6.2.2. ՀՖԿՍՊԻ–ի կայքի թարմացում և արդիա-կանացում	2022-2026թթ.	Բուհի գործունեության վերաբեյալ ամփոփ տեղեկատվությունը տեղադրվում է ՀՖԿՍՊԻ–ի պաշտոնական կայքում: Կատարվել է անհրաժեշտ տեխնիկական վերազինում:	Կայքի այցելուների ընդհանուր քանակ 2023-2024 թթ. կազմել է 59,8 հազար՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի՝ 59,3 հազարի դիմաց, իսկ դիտումների քանակը համապատասխանաբար կազմել է 400,1 հազար, նախորդ ժամանակահատվածի՝ 393,3 հազարի դիմաց:
	6.2.3. ՀՖԿՍՊԻ–ի պաշտոնական էջերի շարունակական թարմա-ցումը, ՀՖԿՍՊԻ–ի գոր-ծունեության և ձեռքբե-րումների մասին տեղե-կատվության հրապարա-կայնության ապահովում	2022-2026թթ.	Տեղեկությունները համապատասխան ձևաչափերով տեղադրվել են ՀՖԿՍՊԻ–ի ֆեյսբուքի և ինստագրամի էջերում:	Հաշվետու ժամանակահատվածում ՀՖԿՍՊԻ–ի Ֆեյսբուք սոցիալական կայքի այցելուների ընդհանուր թիվը նվազել է կազմելով՝ 425,5 հազար, 2022-2023 ուսումնական տարվա 539,2–ի դիմաց, հետևորդների ընդհանուր թիվ՝ 14,4 հազար է, հաղորդագրության փոխանակման թիվը՝ ավելի քան 580, որից 313–ը նոր օգտատերեր (18,1% աճ), 61,9 տոկոսով ավելացել է միջին այցելության ցուցանիշը:
	6.2.4 ԶԼՄ-ների հետ կապի ամրապնդում	2022-2026թթ.	ԶԼՄ–ների հետ կնքվել է համագործակցության 2 պայմանագրեր: Իրականացվել է ԶԼՄ–ների հետ համագործակցության արդյունքում հրապարակված նյութերի մոնիտորինգ	Պատրաստվել է ՀՖԿՍՊԻ–ի գործունեության վերաբերյալ եռալեզու տեսահոլովակ: Պատրաստվել է տեսանյութ «Գիտության և ուժի խաչմերուկում» միջոցառման վերաբերյալ:

	6.2.5.Ուսումնական գործընթացների վերաբերյալ ինֆորմացիայի թարմացում	2022- 2026թթ.	Տեղեկատվությունը պարբերապար թարմացվում /տեղադրվում/ է ՀՖԿՍՊԻ–ի կայքում:	Կայքում և սոցիարցակներում ուսումնական գործընթացների վերաբերյալ տեղեկությունների (դասացուցակներ, քննատախտակներ, ՄԿԾ–ների նկարագրեր) տեղադրմամբ ապահովվում է ուսանողների իրազեկվածության բարձրացում:
	6.2.6. ՀՖԿՍՊԻ-ի գործունեության վերաբերյալ հանդի-պումներ ՋԼՄ-ների հետ՝ հարցազրույցների, ասուլիսների, հեռուստա-հաղորդումների և ռադիոհաղորդումների կազմակերպում	2022–2026թթ.	Կազմակերպվել են ռեկտորի հարցազրույցները տարբեր լրատվամիջոցների հետ, հղումներն առկա են ՋԼՄ–ների մոնիտորինգում:	Ապահովվել է ՀՖԿՍՊԻ–ի ճանաչելիության բարձրացում:
<u>Խնդիր 6.3</u> **Մշակել և իրականացնել ՀՖԿՍՊԻ–ի գործունեու-թյան մասին տեղեկատվական և քարոզչական ակտիվ քաղաքականություն**	6.3.1. ՀՖԿՍՊԻ –ի կոր-պորատիվ ինքնության ճանաչմանն ուղղված գործիքակազմի և տար-բերանշանների կիրարկում	2022 -2026թթ.	Պատրաստվել են բուկլետներ, նոթատետրեր, պաստառներ, որոնք պարունակում են ՀՖԿՍՊԻ–ի տարբերանշանը:	Ապահովվել է ՀՖԿՍՊԻ–ի ճանաչելիության բարձրացում
	6.3.2 Հասարակական իրազեկման բարձրացմանն ուղղված միջոցառումների իրականացում	2022–2026թթ.	Կազմակերպվել է տեղեկատվական 2 հանդիպում: Պրեսս–տուրեր չեն կազմակերպվել ֆինանսական միջոցների անբավարարության պատճառով:	Կազմակերպվել է տեղեկատվական հանդիպում «Հայաստան -2025» խմբի ներկայացուցիչների և մարզաձևերի ազգային ֆեդերացիաների ներկայացուցիչների հետ
	6.3.3 Կրթական ցուցա-հանդեսների և շրջայցերի կազմակերպում:	2022-2026թթ.	ՀՖԿՍՊԻ–ին մասնակցել է ամենամյա մասնագիտացված ցուցահանդեսին:	Պլանավորված աշխատանքներն իրականացվել են ողջ ծավալով
	6.3.4.«Բաց դռների օրեր» ծարգրի պարբերական իրականացում	2022-2026թթ.	Բուհում պարբերաբար հյուրընկալվում են հանրակրթական դպրոցների աշակերտները:	Բուհում հյուրընկալել ենք 8 հանրակրթական դպրոցների աշակերտների:

	6.3.5. ՀՖԿՍՊԻ–ի եռալեզու բուկլետի պատ-րաստում, հրատարակում, տարածում	2022թ-2026թ.	Եռալեզու բուկլետը տեղադրված է ՀՖԿՍՊԻ–ի կայքում:	Օտարերկրյա և սփյուռքահայ դիմորդների քանակը նախորդ ուսումնական տարվա համեմատությամբ ավելացել է 30,5 տոկոսով:
ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ 7. Լրացուցիչ և շարունակական կրթության բազմազանեցում				
<u>Խնդիր 7.1.</u> Ներդնել ոչ ֆորմալ կրթության բաղադրիչը՝ այդ թվում ինստիտուտի ուսանողների համար	7.1.1.Պրոֆեսորադասախոսական, վարչական անձնակազմի և ուսա-նողների կարիքների վերհանում, ծրագրերի կազմում	2022-2026 թթ.	Կարիքների բացահայտման նպատակով իրականացվել են՝հարցումներ ուսանողների, անձնակազմի, շրջանավարտների և գործընկերների շրջանում: 2023–2024 ուսումնական տարում բուհում կազմակերպվել են հետևյալ դասընթաց–սեմինարները. «Բասկետբոլի մեկնաբանի կարողությունների զարգացումը», «Սպորտային սննդաբանություն», «Ռազմական լրագրության հիմունքները», «Թմրամիջոցների գործածման վնասակար հետևանքները», «Թեստաբանության հիմունքներ» դասընթացը: 2023–2024 ուսումնական տարում ներդրվել է. 1. «Մերսում և առողջարարական ֆիզկուլտուրա դասընթացը», որին մասնակցել է 27 հոգի, 2. «Ֆիտնեսի տեսություն և մեթոդիկա» դասընթացը, մասնակից՝ 8 հոգի, 3. «Հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների վերապատրաստման» ծրագիրը որին մասնակցել է 77 ուսուցիչ,	Առկա են ոչ ֆորմալ կրթական ծրագրեր:
	7.1.2. Մրցունակ դիմորդ-ների համակարգի ներդրում՝ նախապատ-րաստական դասընթաց-ների կազմակերպում	2022-2026 թթ.	Մրցունակ դիմորդների համակարգի ներդրման շրջանակներում բուհը շարունակել է իրականացնել նախապատրաստական դասընթացներ՝ հիմնականում ուղղված օտարազգի դիմորդներին: 2023–2024 ուսումնական տարում նախապատրաստական դասընթացներին մասնակցել է 1 օտարերկրյա ուսանող՝ հայոց լեզու առարկայից:	Նախապատրաստական դասընթացների ծրագրերի մշակում: Մոտիվացված դիմորդների համար կիրառվել են հանդիպումներ՝ սեմինարներ, ներկայացվել են ինովացիոն ծրագրեր:

<u>Խնդիր 7.2.</u> Ապահովել ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտում ազգաբնակչության բոլոր տարիքային խմբերի համար շարունակական և ցկյանս կրթության հասանելիություն՝ միջնաժամկետ և կարճաժամկետ ծրագրերի ներդրմամբ	7.2.1.Շուկայի ուսումնասիրություն, պահանջված մասնագիտացումների, կարողությունների և հմտությունների որոշում, շարունակական կրթության իրականացում	2022-2026 թթ.	Ներդրվել են. «Մերսում և առողջարարական ֆիզկուլտուրա դասընթացը», «Ֆիտնեսի տեսություն և մեթոդիկա» դասընթացը, «Հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների վերապատրաստման» դասընթացը, «Մանկան մերսում» ծրագիրը:	Կարճաժամկետ և միջնաժամեկտ լրացուցիչ ծրագրերի առկայություն:
<u>Խնդիր 7.3.</u> Իրականացնել ինստիտուտի ՊԴԱ–ի վերապատրաստման ծրագրեր	7.3.1.Կարիքների վերհանում, ծրագրի կազմում, Պլանավորում, Իրականացում, Գնահատում, Կատարելագործում	2022-2026թթ.	2022–2023 ուսումնական տարում իրականացվել են 4 վերապատրաստման ծրագրեր դասախոսների համար հետևյալ թեմաներով. 1.«Ինչպես գրել գիտական աշխատանք», 2.«Գիտական սեմինար», 3.«Թեստաբանության հիմունքներ», 4.«Ակտիվ ուսուցման և դասավանդման մեթոդները. ձևավորող գնահատման մոտեցումներն ու գործիքակազմը»: 2023–2024 ուսումնական տարում լրացուցիչ և շարունակական կրթության բաժինը ՄՌԿ բաժնի հետ համատեղ իրականացրել է վերապատրաստում ՊԴ կազմի համար «Թեստաբանության հիմունքներ» թեմայով, որին մասնակցել են 57 դասախոս:	Մատուցվող կրթական ծառայությունների որակի բարելավումը և ՊԴԱ կազմի կատարելագործումը կրում է շարունակական բնույթ:
<u>Խնդիր 7.4.</u> Խթանել դպրոցականների շրջանում առողջ ապրելակերպը, կազմակերպել «Ամառային դպրոց»–ներ՝ դպրոցականների, այդ թվում՝ ինստիտուտի աշխատակիցների համար	7.4.1. Ոլորտային «Ամառային դպրոց»–ների ծրագրերի մշակում	2022-2026թթ.	Ամառային դպրոցը գործել է միայն 2021–2022 ուսումնական տարում:	Անհրաժեշտ ռեսուրսների բացակայության պատճառով ամառային դպրոցը դադարել է գործել:
	7.4.2. Աշխատակիցների երեխաների ամառային ժամանցի կազմակերպում	2022-2026թթ.	Աշխատակիցների երեխաների ամառային ժամանցը չի կազմակեպվել անհարժեշտ ֆինանսավորման բացակայության պատճառով:	Աշխատակիցների աջակցման այդ ծրագիրը չի գործում:

	7.4.2. Բուհում գործող ծրագրերի վերաբերյալ իրազեկման աշխա-տանքների իրականացում	2022-2026թթ.	Նախապատրաստական, լրացուցիչ և շարունակական բաժինը սկսել է գործնեություն ծավալել 2021 թ.: Ծրագրերի վերաբերյալ իրազեկման աշխատանքները տարվել են մի քանի ուղղությամբ՝ ինստիտուցիոնալ կայքի, սոցիալական մեդիայի, հոլովակների և տեքստային նյութերի, թռուցիկների, բուկլետների միջոցով պարբերաբար տեղեկատվություն է տարածվել գործող լրացուցիչ ծրագրերի վերաբերյալ:	Բուհում գործող մասնագիտությունների մասին իրազեկումը կրում է շարունակական բնույթ:
ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ 8. Ուսանողական կյանքի ակտիվության ապահովում				
<u>Խնդիր 8.1</u> **Խթանել ուսանողների հասարակական գործունեությունը և նախաձեռնողականու-թյունը**	8.1.2.Քաղաքացիական պատասխանատվության բարձրացման, արժեքա-յին համակարգի ձևա-վորման, ինստիտուտի արժեքները կրելու մե-խանիզմների ներդրում	2023-2026թթ.	Կազմակերպվել է առաջին կուրսի ուսանողների համար բուհի պատմությանը վերաբերող կինոդիտում, որը ճանաչողական բնույթ է կրում: Ինչպես նաև տեղի է ունենում բուհի ուսանող զոհված զինվորներին նվիրված միջոցառում, որտեղ ցուցադրվում է ֆիլմ, որը ներկայացնում է զինվորների անցած ուղին: Միջոցառմանը ներկա են գտնվում ինչպես ուսանողները, ՊԴ կազմը, այլ նաև զոհված զինվորների ծնողները և հարազատները: ՈՒսանողները մասնակցել են մի շարք կամավորական աշխատանքների, օրինակ՝ Վայք քաղաքում օրեր շարունակ մեր ուսանողների աջակցությամբ կազմակերպվել է Արցախից բռնի տեղահանված անձանց համար՝ տրամադրելով սնունդ, հագուստ և անհրաժեշտ պարագաներ: Անցկացվում են նաև մարզական միջոցառումներ, որոնք նվիրված են լինում 44–օրյա Արցախյան պատերազմի ժամանակ զոհված ուսանողներին: Օրինակ՝ Հոկտեմբերյանի շրջանի Արմավիր քաղաքում անցկացվել է կրոսավազք նվիրված 2020թ. Արցախյան պատերազմում հերոսաբար զոհված ՀՖԿՍՊԻ ուսանող Դավթյան Մանվելի հիշատակին, նմանատիպ այլ հուշամրցումներ: Այս մրցումներին ակտիվ մասնակցում է նաև Ուսխորհուրդը:	Ըստ տարեկան պլանավորածի՝ իրականացվել է իրազեկվածության մակարդակը բարձրացնող միջոցառումներ և հասարակական հիմունքներով աշխատանքներ:

	8.1.3. Ուսանողների հասարակական ակտիվությունը խթանող և աջակցող մեխանիզմների ներդնում	2023-2026թթ.	ՈՒԽ–ում ներգրավված ուսանողները ցուցաբերել են բարձր ակտիվություն, լավ վարքագիծ, մասնակցել են մի շարք հասարակական միջոցառումներին, ինչպես նաև ներգրավված են բուհի կառավարման գործընթացում (օրինակ՝ Գիտական խորհուրդ, Հոգաբարձուների խորհրդում): Ըստ կատարված աշխատանքների և ցուցաբերած հասարակական ակտիվության ներկայացվում են ուսանողների անունները ռեկտորին, որի արդյունքում որոշվում է խրախուսման միջոցները (օրինակ՝ հավաստագրեր, շնորհակալագրեր և այլն):	Ուսանողական նախաձեռնությունների թիվը շարունակաբար աճում է:
<u>Խնդիր 8.2.</u> Նպաստել ուսանողների ուսանողական–մարզական գործունեության ակտիվացմանն ու արդիականացմանը	8.2.1. Ուսանողական խմբակների և ակումբների ստեղծում	2022-2026թթ.	Գործում է Ֆիմա մարզական ակումբը և ուսանողական գիտական ընկերությունը: https://www.facebook.com/profile.php?id=61557564058761&mibextid=ZbWKwL https://www.facebook.com/profile.php?id=100083178386286&mibextid=ZbWKwL	Կազմակերպվում է ուսանողների արտալսարանային ակտիվ կյանքը: Օրինակ՝ շաբաթ կամ կիրակի օրերին կազմակերպվում է ընկերական խաղեր՝ վոլեյբոլ, ֆուտբոլ, ինչպես նաև ինտելեկտուալ խաղեր:
	8.2.2. Կրթագիտական, մշակութային, սպորտային, հասարակական ուղղվածության ծրագրերի և միջոցառումների իրականացում	2022-2026թթ.	ՈՒԽ–ն մշտապես աջակից է բուհում իրականացվող ծրագրերին և միջոցառումներին: Օրինակ՝ 2024–2025թթ. ուս. տարվա հեռակա ուսանողների ընդունելության քննությունների կազմակերպում: https://www.facebook.com/share/p/1NSDxSAmgQ/?mibextid=oFDknk Կազնակերպվում են պարբերաբար արշավներ, ամեն տարի ապրիլ–մայիս ամիսներին կազմակերպվում է ծառատունկ, բուհի տարածքում կազմակերպվում են շաբաթօրյակներ:	Ըստ կատարած աշխատանքների գրանցվել է ուսանողների շրջանում բավարարվածության և ներգրավվածության աճ:
<u>Խնդիր 8.3.</u> Բարելավել ուսանողների աջակցության մեխանիզմները	8.3.1. Ուսանողների շրջանում իրազեկման միջոցառումների բարելավում	2022-2026թթ.	Ուսանողների շրջանում իրազեկումը տեղի է ունենում mail–ի միջոցով, facebook սոց. հարթակով, ինչպես նաև ավագների միջոցով: https://www.facebook.com/profile.php?id=61566502556732&mibextid=ZbWKwL	Ըստ մեխանիզմի արդյունքների՝ ուսանողների իրազեկվածության և բավարարվածության աստիճանը գնահատվում է բարձր:

	8.3.2. Խորհրդատվությունների իրականացում	2022-2026 թթ.	Տարվա մեջ երկու անգամ ՄՄ և ԱՏՍՏԿ ֆակուլտետների ուսանողների հետ տեղի է ունենում հանդիպում: Շաբաթը մեկ անգամ հանդիպում ավագների հետ և շաբաթը մեկ անգամ ուսանողական խորհրդի կազմի հետ: Հանդիպումների ժամանակ բարձրաձայնվում են մի շարք խնդիրներ, հնչեցվում են տարբեր առաջարկներ, քննարկվում առաջիկա միջոցառումները:	Պարբերաբար կազմակերպվող հանդիպումների արդյունքում ուսանողների ներգրավվածությունը բարձրանում է:
Խնդիր 8.4. Խթանել ուսանողների հասարակական պատասխանատվությունն բարձրացման գործընթացների իրականացումը	8.4.1. Միջբուհական, համայնքային, պետական և համապետական ծրագրերին, նախաձեռություններին և միջոցառումներին ՀՖԿՍՊԻ–ի ուսանողների մասնակցության ընդլայնում	2022-2026 թթ.	Ամեն տարի տեղի է ունենում Վարչապետի գավաթ, որտեղ բուհի ուսանողներն իրենց ներգրավվածությունն են ունենում:	Ըստ կազմակերպված միջոցառումների՝ ամրապնդվել է կապը ՀՖԿՍՊԻ–ի ուսանողների և հասարակության միջև, բարձրացել է ՀՖԿՍՊԻ ճանաչելիության մակարդակը:
	8.4.2. Ուսանողների հասարակական, կամավորական ակտիվության չափման և խրախուսման մեխանիզմների մշակում և կիրարկում	2023թ.	ՈՒսանողական ակտիվության քարտ դեռևս չի կիրառվում, սակայն կամավորականության ակտիվությունը չի տուժում: Փոխարենը կիրառվում է այլ մեխանիզմ՝ Ուսանողական խորհուրդում առկա է նշումների համար մատյան, որի մեջ ներառված են այն ուսանողների տվյալները, ովքեր մասնակցում են տարբեր տեսակի կամավորական աշխատանքների, որոնց տվյալները պարբերաբար փոփոխվում և թարմացվում են:	ՈՒսանողական ակտիվության քարտը մշակման փուլում է:
ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ 9. Որակի ապահովման ներքին համակարգի զարգացում				
<u>Խնդիր 9.1</u> Զարգացնել կրթության որակի ապահովման (ՈԱ) ներբուհական համակարգը, բուհում ամրապնդել որակի մշակույթը:	9.1.1 ՈԱ գործընթացներում ներքին և արտաքին շահակիցների ներգրավվածության ընդլայնում	2022- 2026թթ.	ՈԱ գործընթացներում ներքին և արտաքին շահակիցների ներգրավվածությունը իրականացվել է տարբեր հարցումների կազմակերպմամբ և հանդիպում–քննարկումների միջոցով: ՈԱ գործընթացների վերաբերյալ համընդհանուր ընկալման և իրազեկվածության բարելավմանը միտված անցկացվել են «Որակի օրեր», որոնց շրջանակներում տարվել են խորհրդատվական աշխատանքներ ՈԱԲ–ի կողմից:	Քննարկումների և հանդիպումների արդյունքում ՈԱ գործընթացների վերաբերյալ համընդհանուր ընկալման և իրազեկվածության մակարդակը շարունակական բարձրանում է:

	9.1.2 Բուհի գործունեության տարբեր ոլորտների ՈԱ ներքին աուդիտի համակարգի գործարկում	2022թ. մշակում և ներդնում 2023-2026թթ. գնահատում	2022–2023 ուսումնական տարում ՈԱԲ-ի կողմից մշակվել և ՀՖԿՍՊԻ-ի Գիտխորհրդի կողմից հաստատվել է «Որակի ապահովման ներքին աուդիտի անցկացման կանոնակարգը»: Կանոնակարգի համաձայն 2023 թ–ին ՈԱԲ–ը իրականացրել է ՈԱ աուդիտ, որի շրջանակներում գնահատվել է բուհի ռազմավարական կառավարման համակարգը՝ կրթական ծրագրերի կառավարման մակարդակում:	Ըստ հաստատված կանոնակարգի նախատեսվում է իրականացնել ՈԱ աուդիտ յուրաքանչյուր ուսումնական տարում՝ ըստ նախապես ընտրված ոլորտի:
	9.1.3 ՈՆԱ շրջափուլային վերանայումների գործիքակազմի և մեթոդաբանության շարունակական բարելավում	2022-2026թթ.	2022թ–ին հաստատվել է «ՀՖԿՍՊԻ կառուցվածքային ստորաբաժանումների և վարչական աշխատակիցների տարեկան աշխատանքների պլանավորման և կառուցվածքային ստորաբաժանումների և աշխատակիցների աշխատանքային գործունեության տարեկան արդյունքների ամփոփման և գնահատման ընթացակարգը»: Վերջինիս գործարկումը կնպաստի ՈՆԱ շրջափուլային վերանայումների գործիքակազմի և մեթոդաբանության բարելավմանը:	Հաստատված ընթացակարգը նպաստելու է ՈԱ կատարողականի գնահատման ցուցիչավորված/ չափանիշահեն համակարգի ձևավորմանը:
	9.1.4 Կրթության որակի ապահովման տեղական և միջազգային կառույցների հետ համագործակցության զարգացում	2022-2026 թթ.	ՈԱԲ–ը պարբերաբար մասնակցել է Որակի ապահովման ազգային կենտրոնի կողմից կազմակերպվող խորհրդատվական հանդիպումներին, ֆորումներին և վերապատրաստումներին՝ միտված որակի ապահովման փորձի փոխանակմանը, լավագույն փորձերի ներդրմանը: Հանդիպումների արդյունքները տարածվել են բուհի դասախոսական և վարչական անձնակազմի շրջանում՝ նպաստելով որակի մշակույթի տարածմանը: 2023 թվականի մարտի 13-17 ՀՖԿՍՊԻ պատվիրակությունը մասնակցեց Բելգիայի Թոմաս Մուր համալսարանում անցկացված շարժունության ծրագրին՝ Erasmus+ միջազգային շարժունության ծրագրի շրջանակում: Ծրագրի արդյունքում իրականացվել է «Որակի ապահովման ներքին համակարգի միջազգային բենչմարքինգ (Թոմաս Մուր համալսարանի օրինակով)»	Իրականացվում է ըստ պլանավորման՝ հնարավոր համագործակցություններ հաստատելու և արդյունքների տեղայնացման միջոցով:

<u>Խնդիր 9.2</u> **Բուհի բոլոր ստորաբաժանումներում և գործընթացներում ձևավորել պլանավորում, իրականացում, գնահատում, բարելավում (ՊԻԳԲ) շրջափուլով աշխատելու մեխանիզմներ**	9.2.1.2 Մասնագիտական և մեթոդական թիրախային վերապատրաստումների համակարգի բարելավում	2022-2026թթ.	2023–2024 ուստարում Որակի ապահովման բաժինը պարբերաբար նեգրավել է բուհի դասախոսական կազմի ներկայացուցիչներից ՀՀ ՈԱԱԿ-ի նախաձեռնությամբ անցկացվող ՄԿԾ բարելավման հաջողված փորձի քննարկումներին: «Որակի օրեր» ձևաչափով կազմակերպվել է «Որակը լսարանում՝ դասավանդման և գնահատման մոտեցումներ» խորագրով դասախոսություններ ՊԴ կազմի համար, ներկայացվել դասի պլանի կառուցման, ակտիվ ուսուցման մեթոդների կիրառման փորձը: Կազմակերպվել է «Գիտական սեմինար երիտասարդ դասախոսների համար» ծրագրի շրջանակում հրավիրվել է արտաքին մասնագետ, որը ներկայացրել է «Ուսումնական գործընթացի կազմակերպման նոր մոտեցումները» թեմայով դասախոսություն ՊԴ կազմի համար:	Արդյունքների գնահատման համար իրականացվող որակի ապահովման ներքին աուդիտը նախատեսվել է 2024-2025 ուստարում:
	9.2.1.3 ՈԱ գործընթացների վերաբերյալ թափանցիկության և հրապարակայնության ապահովման ընթացակարգերի և մեխանիզմների բարելավում	2022-2026թթ.	Որակի ապահովման բաժնի իրականացրած աշխատանքներն ու մշակած փաստաթղթերն հասանելի են ՀՖԿՍՊԻ պաշտոնական կայքէջում: ՈԱ գործընթացներն իրականացվել են հաստատված կանոնակարգերին և ընթացակարգերին համապատասխան, իսկ արդյունքները հասանելի են դարձվել ներքին և արտաքին շահակիցներին՝ քննարկումների, հանդիպումների կամ կայքում հրապարակումների միջոցով:	Գործում է ՀՖԿՍՊԻ պաշտոնական էջում ՈԱԲ-ի ենթաբաժին՝ պարբերական թարմացմամբ՝ համաձայն պլանավորածի:

<u>Խնդիր 9.3</u> **ՀՖԿՍՊԻ–ի հիմնական շահակիցների կարիքների վերլուծության, հաշվետվողականության մեխանիզմների և բացահայտված արդյունքների հիման վրա իրականացնել բարեփոխիչ քայլեր ու գործողություններ**	9.3.1.Ներքին և արտաքին շահակիցների կարիքների վերհանման և գնահատման համակարգի, գործիքակազմի բարելավում	2022-2026թթ.	2022-2023 ուսումնական տարում ՀՀ հանրակրթական դպրոցների հետ (481 դպրոց) ՈԱԲ-ը իրականացրել է հարցում: Հարցման նպատակն էր վեր հանել գործատուի ներկայիս պահանջները, բացահայտել աշխատաշուկայի զարգացումներն ու պահանջները: Նույն ուսումնական տարում ՈԱԲ-ը իրականացրել է ներքին շահակիցների հետադարձ կարծիքի գնահատման հարցումներ (թվով՝ 12 տարբեր հարցումներ), որոնց վերլուծության հիման վրա էլ կազմվել են զեկույցներ: 2023-2024 ուստարում կարիքների վերհանման համար անցկացվել են հարցումներ՝ «Առաջին կուրսեցիների հետ՝ բուհի և մասնագիտության ընտրության դրդապատճառների վերաբերյալ», «ՀՖԿՍՊԻ–ում իրականացվող մասնագիտական/մանկավարժական պրակտիկայի գնահատում», ինչպես նաև արտաքին շահակիցների հարցումներ՝ «Լրագրություն» և «Առողջարարական ֆիզիկական կուլտուրա (կինեզիոլոգիա)» բակալավրի կրթական ծրագրերի մասնագիտական աշխատաշուկայի կարիքների գնահատում:	Ներքին և արտաքին շահակիցների կարիքների վերհանման մեխանիզմները ընդգրկել են շահակիցների բավականին լայն շրջանակ, սակայն ոչ բոլոր մասնագիտությունների դեպքում:
<u>Խնդիր 9.4</u> **Վերանայել և բարելավել ՈԱ քաղաքականությունը, ընթացակարգերն ու մեխանիզմները՝ հիմնվելով ներքին և արտաքին գնահատումների արդյունքների վրա:**	9.4.1 Որակի ապահովման (ՈԱ) ներքին քաղաքականության վերանայում, որակի ներքին ապահովման (ՈՆԱ) համակարգի արդյունավետության գնահատման մեթոդաբանության բարելավում	2022-2026թթ.	2022թ–ի նոյեմբեր ամսին հաստատվել է «ՀՖԿՍՊԻ որակի ապահովման քաղաքականությունը», որի հիման վրա գործարկվել են ՈԱ ընթացակարգերը: Որակի ապահովման ձեռնարկի վերանայման աշխատանքները գտնվում են ընթացիկ փուլում:	ՈԱ քաղաքականության և ՈԱ ձեռնարկի վերանայումը նախատեսված է հետագայում:
	9.4.2 ՈԱ ընթացիկ մշտադիտարկման և գնահատման համակարգի արդյունավետ գործարկում	2022-2026թթ.	ՈԱ համակարգը շարունակաբար մշտադիտարկվում է՝ հաստատված կանոնակարգերի և ընթացակարգերի գործարկման ադյունքում:	Պլանավորման համաձայն՝ ՈԱ ներքին գնահատման համակարգի վերանայումն ու բարելավումը իրականացվում է պարբերաբար արդյունավետության գնահատման և արդյունքների հիման վրա բարելավումների իրականացմամբ:

	9.4.3 Կրթական ծրագրերի ՈԱ ներքին գնահատումների բազմատեսականացում, ՄԿԾ–ների միջազգայնացման խթանում	2022-2026 թթ.	Կրթական ծրագրերի ՈԱ ներքին գնահատումներն իրականացվել են հարցումների, ֆոկուս խմբերի, քննարկումների միջոցով: ՄԿԾ–ների միջազգայնացման խթանման համար իրականացվել է բենչմարքինգ (2023թ–ին «Լրագրություն» կրթական ծրագրի Բելգիայի «Թոմաս Մուր» համալսարանի Լրագրության ֆակուլտետի Լրագրություն կրթական ծրագրերի բենչմարքինգ)	Պլանավորման համաձայն՝ միջազգային չափանիշների, «Թյունինգ մեթոդաբանության» պահանջներին համապատասխան կրթական ծրագրերի վերանայում դեռևս չի իրականացվել:
<u>Խնդիր 9.5</u> **Նպաստել ՀՖԿՍՊԻ-ի ինտեգրմանը Եվրոպական բարձրագույն կրթության տարածք (ԵԲԿՏ)**	9.5.1 Որակի ապահովման Եվրոպական չափորոշիչներին և ուղենիշներին (ԵՁՈԻ) համապատասխան ՈՆԱ համակարգի զարգացում	2022-2026	2022 թվականին ՈԱԲ բաժինը Որակի ներքին ապահովման (ՈՆԱ) միջազգային բենչմարքինգի արդյունքների հիման վրա վերամշակել է ՈԱ քաղաքականությունն, վերանայել և ամբողջացրել է ՈՆԱ գործընթացները կարգավորող փաստաթղթային հենքը: Հետևելով ՈՆԱ քաղաքականությանը՝ Որակի ապահովման բաժինը նույն ուստարում իրականացրել է Որակի աուդիտ, արտաքին և ներքին շահակիցների հետադարձ կարծիքի մշտադիտարկումներ (12 զեկույց), ֆոկուս–խմբային քննարկումներ, ՈՆԱ մշտադիտարկումներ, խորհրդատվական հանդիպումներ, ՊԴ կազմի վերապատրաստումներ, կատարվել է նաև 2023-2024 ուստարվա աշխատանքային պլանների փորձաքննություն:	Պլանավորման համաձայն յուրաքանչյուր ուստարի իրականացվում է ՈԱ աուդիտ՝ կանոնակարգի համաձայն ընտրված ոլորտի շրջանակներում:
	9.5.2 Որակի ապահովման համակարգի միջազգայնացման գործընթացների շարունակական բարելավում	2022-2026	ՈԱԲ–ը դիմել և իրականացրել է Erasmus+ վարչակազմի շարժունության ծրագիր, մասնակցել է կրթական ծրագրերի փորձի փոխանակման միջազգային ծրագրերին և համաժողովներին: Միջազգային փորձի փոխանակման մանրամասները տես՝ 9.1.4 կետում:	Պլանավորման համաձայն իրականացվել է ՈՆԱ համակարգի միջազգային փորձի բենչմարքինգ, որի արդյունքում վերլուծվել է բուհի ՈՆԱ համակարգի արդյունավետությունը:
ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ 10. Կարիերայի հնարավորությունների ընդլայնում և կառավարում				
<u>Խնդիր 10.1.</u> **Նպաստել ՀՖԿՍՊԻ ուսանողների ու շրջանավարտների զբաղվածության**	10.1.2. «Կարիերայի տեղեկատվական օրեր» և աշխատանքի ցուցահանդեսների պարբերական իրականացում	2022-2026թթ.	Ամեն տարի անցկացվում է «Կրթություն և կարիերա» EXPO 2023–2024թթ., ինչպես նաև բուհի ներսում ավարտական կուրսերում գտնվող ուսանողների համար իրականացվում է իրազեկում մագիստրոսական ծրագրերի վերաբերյալ:	Ըստ կատարած աշխատանքի՝ իրազեկվածության մակարդակի բարձրացում է գրանցվել:

բարձրացմանը և կարիերայի աճի զարգացման հնարավորությունների, ինչպես նաև աշխատաշուկայում մրցունակության բարձրացմանը	10.1.3. Աշխատանքի որոնման և ընդունման գործիքակազմի ուսուցման սեմինարների իրականացում	2022-2026թթ.	Տեղի է ունենում պարբերաբար հանդիպումներ «Reebok» սպորտային համալիրի ներկայացուցիչների հետ, որի շրջանակներում մասնակցություն է ունեցել մի շարք ուսանողներ: https://www.facebook.com/share/p/1EBda5a8qD/?mibextid=wwXIfr https://www.facebook.com/share/p/1HJnHM4haT/?mibextid=wwXIfr Տեղի են ունեցել նաև պարբերաբար հանդիպումներ «Դասավանդիր Հայաստան» հիմնադրամի ներկայացուցիչների հետ, որի շրջանակներում մասնակցել են մի շարք ուսանողներ, նաև եռօրյա ճանաչողական հանդիպում է իրականացվել: Բուհում տեղադրվել էր տաղավար, որտեղ ներկայացնում էին իրենց կողմից տրվող աշխատաշուկան: https://www.facebook.com/share/p/1AK6BVika8/?mibextid=wwXIfr https://www.facebook.com/share/p/16Ezprvsk2/?mibextid=wwXIfr Նախաձեռնել և իրականացվել են բուհի տարածքում ճանաչողական այցեր, հանրակրթական դպրոցների և վարժարանների համար, ընդհանուր այցելել են 20 ուսուցիչ և 300-ից ավելի աշակերտ:	Ըստ նախատեսված (առնվազն 4) սեմինարների՝ իրականացվել է երկու գործընկերների կողմից: Reebok սպորտային համալիրի ներկայացուցիչների հետ հանդիպումը իրականացվել է 2 անգամ, մասնակցել են առկա 3-րդ, 4-րդ, հեռակա 4-րդ և 5-րդ կուրսերի ուսանողները: Ծրագրին դիմել են 12 ուսանող, սակայն չեն հաղթահարել հարցազրույցի փուլը, քանի որ պարտադիր էր անգլերեն լեզվի իմացությունը: Հանդիպումը իրականացվել է «Դասավանդիր Հայաստան» հիմնադրամի ներկայացուցիչների հետ 4անգամ, մասնակցել են առկա 3-րդ, 4-րդ, հեռակա 4-րդ և 5-րդ կուրսերում գտնվող ուսանողները: Ծրագրին դիմել են 14 ուսանող, սակայն մի մասը չեն հաղթահարել հարցազրույցի փուլը, իսկ մյուս մասը խմբային աշխատանքը, որտեղ փափուկ հմտություններ կիրառելն անհրաժեշտ է:

<u>Խնդիր 10.2</u> **Ընդլայնել ՀՖԿՍՊԻ–ի համագործակցությունը գործատուների հետ՝ նպաստելով ՄԿԾ-ների արդիականացմանը և կրթության որակի բարձրացմանը**	10.2.1. Կարիերայի կառավարման ոլորտի տեղական և միջազգային փորձագետների ներգրավմամբ մասնագիտական դասընթացների իրականացում	2022-2026թթ.	Ուսանողների, դասախոսների և լրացուցիչ–շարունակական կրթության դասընթացների մասնակիցների համար <u>ՀՖԿՍՊԻ</u>–ում կազմակերպվել էր «Սպորտային սննդաբանություն» թեմայով սեմինար, որը վարել է՝ Հովհաննես Ավագյանը: https://www.facebook.com/share/p/1FUcQH4TWX/ Հայաստանում Հնդկաստանի դեսպանատունը յոգայի «Լույս» ստուդիայի հետ համատեղ ՀՖԿՍՊԻ–ում կազմակերպել էր դասընթաց՝ «Հոգեկան առողջություն և մեդիտացիա» թեմայով, որը վարել է յոգայի մասնագետ Սվետլանա Ավագյանը և Հնդկաստանից ժամանած հատուկ հյուր, յոգայի գուրու Ամիտ Ռայնան: https://www.facebook.com/share/p/1KtNMoRnho/	Դասընթացներն իրականացվել են ըստ տարեկան պլանավորման, բացառությամբ նրա, որ միջազգային փորձագետների ներգրավմամբ մասնագիտական դասընթացներ չեն իրականացվել:
	10.2.2 Կարիերայի հնարավորությունների միջազգայնացմանը նպաստում և աջակցում	2022-2026թթ.	Տարբեր միջազգային հարթակների հարցումներին պարբերաբար ինֆորմացիա է տրամադրվում շրջանավարտների վերաբերյալ՝ WES (Համաշխարհային կրթության ծառայության), ICD (International Consultants of Delaware), ինչպես նաև Enic-Naric-ների հարցումներով:	Հաշվետու ժամանակահատվածում տեղեկություն է հասանելի դարձել 13 շրջանավարտների վերաբերյալ, որից, քանի որ 2021-22թթ-ին հարցում չի եղել (բացառությամբ Enic-Naric-ների) նախորդ տարիներին, ուստի կարելի է ասել, որ աճել է արտերկրում աշխատող շրջանավարտների թվաքանակը:
	10.2.3. Բուհ-գործատու երկխոսության մոդելի մշակում և կիրարկում	2023-2024թթ.	Բուհ–գործատու–շրջանավարտ կապի մոդելը գործում է: Համագործակցում ենք «Դասավանդիր Հայաստան» հիմնադրամի, Reebok սպորտային համալիրի հետ, ինչպես նաև մի շարք հանրակրթական դպրոցների, քոլեջների և բուժ. հաստատությունների հետ:	Ստեղծվում է գործատուների և շրջանավարտների բազա և հետևողական աշխատանքներ են տարվում այս մեխանիզմի բարելավման համար:
<u>Խնդիր 10.3</u> **Ամրապնդել շրջանավարտների և ՀՖԿՍՊԻ-ի միջև մշտական կապը**	10.3.1 ՀՖԿՍՊԻ-ի գործունեության տարբեր ոլորտներում առկա խնդիրների վերհանման և լուծման գործում ն շրջանավարտների մասնակցության խթանում	2022-2026թթ.	Նախկինում անցկացվել են անվանական կրթաթոշակների տրամադրման արարողություններ, որտեղ ներգրավված են եղել բուհի նախկին շրջանավարտները:	Կրթաթոշակների տրամադրման արարողությունները վերջին 2 տարում չի անցկացվում, հետևաբար համեմատություն հնարավոր չէ իրականացնել:

	10.3.2. Շրջանավարտների միության հիմնում, հանդիպումների կազմակերպում	2022-2026թթ.	Առկա չէ	Ըստ պլանավորածի՝ տարեկան 2 միջոցառումները շրջանավարտների մասնակցությամբ չեն իրականացվել շրջանավարտների միության բացակայության պատճառով: